

բաներ կան, և բաներ էլ կան, որոնց մէջ սխալուում է Նորայր Բիւզանդացին: Ազաթանգեղոսի նման մի երկի քննական բնագիր կազմելը մի մարդու գործ չէ. դեռ ամբողջ սերունդներ պիտի աշխատեն դրա վրա: Ահա թէ ինչը չէ մտածում Նորայր Բիւզանդացին: Եթէ նա այդ մտածէր, կը թուէր գոնէ մի քանիսն այն «բազում առաւելութիւններից», որ Էջմիածնի այս հրատարակութիւններն ունին իրենց նախորդների վրայ: Յառաջադիմութիւնը հետզհետէ առաւելութիւններով է լինում և ոչ թէ միանգամից կատարելութեամբ, որ Նորայր Բիւզանդացու էլ ոյժից վեր է: Մ. Ա.

Գրիգոր Մագիստրոսի «Գամագականի» ամբողջական լուծում.  
Երկասիրեց Հ. Գաբրիել ծ. վ. Մենեկիբեան. Վիեննա 1912.

Գրիգոր Մագիստրոսը իւր նամակների մէջ յաճախ այնպիսի խրթին և յունաբան լեզու է բանեցնում, որ շատ դժուար է հասկացւում, երբեմն նոյն իսկ անհասկանալի է մնում: Վերջին կարգին պատկանում է նրա «գամագտական» կոչուած նամակը, որ մի հանելուկ է (Կոստանեանի հրատ. Ձէ նամակը): Դա մի տաղաչափական գրուածք է, որի չափը լոկ փորձում է որոշել Հ. Մէնէվիշեանը: Նորայր Բիւզանդացին 1900 թ. «Բանասէրի» մէջ հրատարակած է այս նամակը, հետը նաև նամակի մի մասի լուծումը, որ նոյն իսկ Մագիստրոսի գրածն է: Նամակի մնացած մասը չէր լուսաբանուած, և այժմ ահա Հ. Մէնէվիշեանը արդէն լուսաբանուած մասի հետ տալիս է այժմ մնացած մասի մեկնութիւնը հիմնուելով նոյն իսկ Մագիստրոսի «ոճի և բառամթերքի» վրայ և ապա երկու ձեռագիր բառարանների վրայ. մէկը «գոր արարեալ է մեծ Վարդապետին Վարդանայ ի խնդրոյ թագաւորին Հայոց Հեթմոյ», միւրը, որ արտագրուած է մի տպագիր բառարանից «Բառգիրք Հայոց արարեալ ի սուրբ Էջմիածին Երեմիա վարդապետէ» որ տպագրուած է 1698-ին «ի Յալիկառնայ քաղաքի» և 1728-ին: «Եթէ պակսէին այս բառագրքերն, ստուգիւ անմեկնելի պիտի մնային «գամագտականին» շատ մը բառերը»:

Հ. Մէնէվիշեանի այս աշխատանքը մեծ խնամքով և առանձին սիրով պատրաստուած մի գործ է, որ ցոյց է տալիս, թէ հեղինակն զբաղուած է հայերէն բառեր հաւաքելով և ուսումնասիրելով (եր. 7): Բացի այն որ Մագիստրոսի մի նամակը սրանով հասկանալի է դարձած, բացատրուած են բազմաթիւ հայերէն հնացած և անհասկանալի բառեր, որոնք չեն մտնում ծանօթ բառարանների մէջ: Հ. Մէնէվիշեանը թէպէտ չի ուսումնասիրում Մագիստրոսը, բայց նրա աշխանքը մեր զրականութեան պատմութեան համար ևս մասնակի նշանակութիւն ունի. նա մի քանի գծերով բնորոշում է Մագիստրոսի երկը. երևում է, որ 11-րդ դարու այս բազմահմուտ հայ ազգասէր գիտնականը տեղեակ է եղել նաև բժշկականութեան, շատ տեղեկութիւններ է տալիս մարդակազմութեան և ախտաբնութեան վրայ. նա իր «Գամագտականի» մէջ օգտուել է յոյն կատակերգու Արիստոֆանից: Մ. Ա.

Л. М. Мелнксетъ — Бековъ. Старинныя Армянскія Надписи въ Музеѣ Общества исторіи и древностей въ Одессѣ. Тифлисъ 1912.

Այս գրքոյկի մէջ տրուած է Օդեսսայի պատմութեան և հնութիւնների թանգարանում պահուող երեք հայերէն արձանագրութիւնների նկարագիրը պատկերներով և նրանց ընթերցումը: Դրանցից մէկն է «Յիշատակ է ազբիւրս Փառակեցի Ռսկանայ Սահակի որդի պարոն Թևանի աղային և որդոյն Գէորգին, դստերացն արևուն, և համայն ընտանեացն կենդանեացն և ննջեցելոց հոգուն. շինեցաւ թվին ՌՃՂԲ ին» 1743 թ. Փրկչին: Այս արձանագրութիւնը բերուած է Աքքերմանից: Երկրորդ արձանագրութիւնն է մի խաչ քար 1700 թուականի. իսկ երրորդ արձանագրութիւնը վերաբերում է դարձեալ մի աղբիւրի. քարի մի կտորն է միայն մնում, որի վրայ սակայն կայ Գենուայի գինանիշը, որը ցոյց է տալիս, ըստ հեղինակի, թէ արձանագրութիւնը Գենուացոց տիրապետութեան շրջանից է, յատկապէս 1378—1396:

Մ. Ա.